Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 1

Քաղաք Երևան, 1 փետրվարի 2021 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) հերթական նիստի

Մասնակցում էին՝

Վ. Քերոբյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)

Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (Խորհրդի անդամ)

Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Ք. Գրիգորյան – ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Տ. Գաբրիելյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ)

Մ. Սանդոյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ կառավարման խորհրդի անդամ (Խորհրդի անդամ)

Է.Բասենցյան- ՍԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ (Խորհրդի քարտուղար)

Հրավիրված էին՝

Գ. Ավետիսյան- ՍԱՏՄ ղեկավար,

Գ. Սարոյան- ՍԱՏՄ ղեկավարի տեղակալ,

Ա. Դանիելյան-ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի Շուկայի վերահսկողության և Սննդամթերքի անվտանգության ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության պետ

Ա. Ավետիսյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի զարգացման ծրագրերի վարչության խորհրդական

Մ. Երիցյան- ՍԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ,
Ա.Հակոբյան - ՍԱՏՄ որակի ապահովման վարչության պետի պարտականությունները կատարող,
Ա. Կուրղինյան- ՀՀ էկոնոմիկայի նախարարության որակի ենթակառուցվածքների զարգացման վարչության գլխավոր մասնագետ

Բացակայում էին՝

Լ.Նանուշյանը - ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղական (Խորհրդի անդամ),

Բ.Պիպոյան - «Իրազեկ և պաշտպանված սպառող» ՀԿ նախագահ (Խորհրդի անդամ),

Մ. Բեգլարյան – ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար (Խորհրդի անդամ)

Ողջունելով ներկաներին Խորհրդի նախագահ Վ. Քերոբյանը փաստեց, որ քվորումը ապահովված է: Ներկայացրեց օրակարգը և առաջարկեց քվեարկել: Խորհրդի անդամները 7 կողմ ձայնով հաստատեցին հերթական նիստի օրակարգը:

Ա.Ասոյանը հայտնեց, որ օրակարգի 2-րդ և 3-րդ հարցերը, ըստ էության, ներառված են 1-ին հարցի մեջ՝ որպես սեղմ տարբերակ, որպես հաշվետվության բաղկացուցիչ մաս: Առաջարկեց այդ հարցերը ներկայացնել օրակարգի 1-ին հարցով, բայց քննարկել առանձին, եթե դեմ չեն Խորհրդի անդամները՝ նաև հաշվի առնելով ժամանակի սղությունը:

Նախագահը հարցրեց, թե արդյոք դրանք օրենքով առանձին քննարկելիք հարցեր են հանդիսանում:

Նախագահի հարցին ի պատասխան՝ Ա. Ասոյանը հայտնեց, որ այո, առանձին քվեարկելու հարցեր են:

Նախագահն առաջարկեց ըստ օրակարգի հերթականության ներկայացնել հարցերը, այնուհետև ընդհանուր պատկերն ունենալուց հետո հարցերի համար քվեարկել առանձին-առանձին:

1. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի տարեկան հաշվետվության նախագծին հավանություն տալու մասին

(Գ.Ավետիսյան, Տ.Գաբրիելյան, Ա.Պողոսյան, Ա.Առաքելյան, Մ.Սանդոյան, Ա.Ասոյան)

Գ.Ավետիսյանը ներկայացրեց Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի տարեկան հաշվետվության սեղմնագիր տարբերակը:

Հաշվետվության ներկայացման ավարտից հետո Նախագահն առաջարկեց հարցերի առկայության դեպքում ներկայացնել դրանք:

Ա.Առաքելյանը նշեց, որ հաշվետվության համաձայն՝ լաբորատոր փորձարկման մրցույթին պետական ոչ մի հիմնարկություն չի մասնակցել և հետաքրքրվեց դրա պատճառներով:

Գ.Ավետիսյանը հայտնեց, որ ՀՀ վարչապետի հանձնարարականի համաձայն՝ այդ գործընթացին միայն պետք է մասնակցի մասնավոր հատվածը:

Ա.Ասոյանը հավելեց, որ հաշվի առնելով որ «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առեվտրային կազմակերպությունն ունի համապատասխան գործիքակազմը, կարող է փորձաքննություն իրականացնել, բայց քանի որ կան ոլորտում հավատարմագրված լաբորատորիաներ, որոնք որևէ առումով չեն զիջում պետական լաբորատորիաներին, և նպատակը հիմնականում մասնավոր հատվածին այդ գործընթացի մեջ ներգրավումն է եղել: Լաբորատորիաների ընտրությունն իրականացվում է մրցույթի միջոցով, որն էլ ապահովում է մրցակցություն: 2021 թվականին մրցույթով ընտրվել են 3 լաբորատորիաներ, որոնք սահմանային պետական վերահսկողության շրջանակներում իրականացնելու են լաբորատոր փորձաքննություններ:

Տ. Գաբրիելյանը հետաքրքրվեց մասնավոր լաբորատորիաների մասնակցության հանգամանքի վերաբերյալ գնահատականով:

Գ. Ավետիսյանը հայտնեց, որ բացասական է վերաբերվում:

Տ.Գաբրիելյանը նշեց, թե արդյոք նպատակահարմար է Տեսչական մարմնի ենթակայության տակ ունենալ «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն և հիմնվել մասնավոր լաբորատորիաների վրա:

Գ.Ավետիսյանը նշեց, որ սահմանային վերահսկողության շրջանակներում դա խնդիր է առաջացնում, բայց առկա է առավել լուրջ խնդիր՝ հանրապետությունում ռեֆերենս լաբորատորիայի բացակայությունը: Հետևաբար հնարավոր չէ բողոքարկել մասնավոր լաբորատորրիաների կողմից իրականացված փորձաքննությունների արդյունքները:

Նախագահի «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ռեֆերենս լաբորատորիայի նշանակմանը խանգառող հանգամանքի վերաբերյալ հարցին ի պատասխան Գ. Ավետիսյանը հայտնեց, որ առաջարկը ներկայացվել է միայն սննդամթերքի անվտանգության բնագավառով, սակայն առկա է որոշակի վարչարարություն: Միաժամանակ հայտնեց, որ անասնաբուժության և բուսասանիտարաիայի բնագավառներում հանրապետությունում համապատասխան այլ լաբորատորիաներ չկան:

Ա.Ասոյանը ներկայացրեց ռեֆերենս լաբորատորիայի առանձնահատկությունները և նշեց, որ անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեֆերենս լաբորատորիա նշանակման դեպքում կունենանք բաց՝ հաշվի առնելով այն, որ որոշ ծառայություններ հանրապետությունում իրականացնում են միայն վերջինիս կողմից:

Նախագահն առաջարկեց խնդրին անդրադառնալ նիստի վերջում:

Մ. Սանդոյանը հետաքրքրվեց տուգանքների արդյունքում նշանակված գումարի մինչև այժմ չհավաքագրված մասի բացվածքով՝ մասնավորապես ձեռնարկատերերից ստացված բողոքարկումների տեսաչափում:

Գ.Ավետիսյանը տեղեկացրեց, որ հանրապետությունում տիրող ռազմական և արտակարգ դրություններով պայմանավորված ստուգումները հիմնականում իրականացվել և տուգանքի որոշումները կայացվել են 4-րդ եռամսյակում: Մի մասով ներկայացվել է ԴԱՀԿ բռնագանձման նպատակով, ինչպես նաև տուգանք նշանակելու մասին որոշումները անբողոքարկելի չեն դարձել: Երկու դեպքով գործերը գտնվում են դատարանում:

Ա.Ասոյանը նշեց, որ շատ կարևոր է նշանակված տուգանքների գումարների հավաքագրումը և պետական բյուջե մուտքագրումը, բայց կարևոր է նաև բողոքների ցածր թիվը, որը ցույց է տալիս տեսչական մարմնի աշխատանքի արդյունավետությունը: Սակայն այստեղ առկա է մեկ նրբություն. տեսչական

մարմինները հրաժարվել են այն գաղափարախոսությունից, որ եթե տեսչական մարմինը շատ գումար է մուտքագրել բյուջե, ապա լավ է աշխատել: Տեսչական մարմինների գործունեության արդյունավետությունը չափվում է սահմանված վերահսկողության ոլորտում անվտանգության մակարդակի բարձրացմամբ: Որպես արդյունավետության բարձրացման վառ օրինակ է մասնավորապես արտակարգ դրության ժամանակ բոլոր տեսչական մարմինների կողմից իրականացրած 81200 ստուգայցի համադրումը առկա ընդամենը 2 բողոքների հետ:

Տ.Գաբրիելյանը հետաքրքրվեց, թե որն է հանդիսանում տնտեսավարողների մոտիվացիան սահմանված պահանջների պահպանման համար, եթե տուգանքի գումարը ցածր է:

Ա. Պողոսյանը հայտնեց, որ հաշվետվության վերաբերյալ իրեն հետաքրքրող հարցերը ընթացքում քննարկման առարկա արդեն դարձան: Սակայն նպատակահարմար է գտնում նշել, որ տուգանքի որոշման 264 դեպքով առկա է 21,500,000 ՀՀ դրամ հաշվարկային պարտավորություն: Մեկ որոշմանը բաժին է ընկնում մոտավոր 80, 000 ՀՀ դրամ, իսկ հավաքագրման ցուցանիշը հիմք ընդունելու դեպքում՝ 36000-37000 ՀՀ դրամ: Այնուհետև Գ. Ավետիսյանից հետաքրքրվեց, թե այս տուգանքներով հնարավոր է ազդել արտադրողի կամ առհասարակ տնտեսավարողի վարքագծի վրա, որպես արտաքին ներգործության միջոc որքանով են սրանք արդյունավետ: Միաժամանակ տեղեկացրեց, որ հակված չէ վարչական կոշտ մեթոդներով խնդիրների կարգավորմանը, այլ ավելի մոտիվացիոն կամ այլ լուծումների կողմնակից է: Պետք է հստակեցնել ռազմավարությունը, եթե մեղմ վարչարարություն ենք իրականացնելու, բայց դա վարքագիծ չի փոխելու ու մենք տարիներ շարունակ ունենալու ենք արտաքին շուկաներում ոչ մրցունակ կամ ոչ վստահելի ապրանք, որը դժվարեցնում է հաղորդակցությունը մեր գործընկերների հետ: Անհանգստություն հայտնեց նաև, որ բողոքարկման ցածր թիվը երկակի ցուցիչ է, մի առումով կարելի է ենթադրել, որ վարչական տուգանքները հիմնավոր են ու փաստարկված, և տնտեսավարողը անիմաստ չի պայքարում դրա վերացման համար, մյուս կողմից համակարգերը, որոնց դիմում են դատական կամ արտադրական, հատկապես վերջինը՝ վստահություն չեն ներշնչում: Ներկայացրեց Պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմած վարչական ակտերի բողոքարկման վիճակագրությունը: Արդյունքում առաջարկեց իրականացնել վերլուծություն:

Նախագահը հավելեց, որ եթե մարդիկ պետք է պայքարեն 30000 ՀՀ դրամ տուգանք չվճարելու համար, ապա կարող է բողոքարկելու համար մասնագետին վճարելու գումարը չբավարարել: Կիսում է Ա.Պողոսյանի մտահոգությունն այդ հարցում: Առաջարկեց գնալ այն երկրների ճանապարհով, ովքեր տնտեսավարող

սուբյեկտների հետ ունեն գործընկերային հարաբերություններ: Ներկայացրեց այլ երկրների փորձը ստուգումների իրականացման և տուգանքների նշանակման գործընթացներում, շեշտեց այն հանգամանքը, որ առաջին ստուգման ժամանակ տնտեսավարող սուբյեկտը չի տուգանվում, այլ տրամադրվում է խորհրդատվություն:

Գ.Ավետիսյանը նշեց, որ իր նշանակման սկզբում շարժվել են այդ սկզբունքով, ՍԱՏՄ-ի տեսուչները այցելել են տնտեսավարող սուբյեկտներ բացերը վերհանելու և խորհրդատվություն տրամադրելու նպատակով: Կարևորեց նաև սննդամթերքի կեղծման համար քրեական պատասխանատվության խստացման հանգամանքը՝ նշելով, որ ներկա պահին Ազգային Ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ համապատասխան նախագիծ է շրջանառվում: Նախագծի համաձայն՝ խստացվում են գործող սանկցիաները:

Խորհրդի անդամները փաստեցին, որ սննդամթերքի կեղծումն կատարվում է դիտավորյալ և անմիջական վտանգավոր է մարդու կյանքի և առողջության համար:

Նախագահը նշեց, որ կարևոր հարց է և անհրաժեշտ է առանձին հանդիպում կազմակերպել և քննարկել առավել արդյունավետ տարբերակները, որովհետև բոլորս էլ համաձայն ենք, որ խորհրդատվության տրամադրումը և այնուհետև ցավալի պատժումը ճիշտ մեխանիզմ է: Կորոշվի թե ցավալի պատժումն ազատազրումն է, թե բիզնեսի գործունեության դադարեցումը, շատ բարձր գումարով տուգանելը կամ այլ տարբերակ: Պետք է նաև ապահովվել հետևողականությունը, ստուգում իրականացնել հաճախ:

Գ. Ավետիսյանը հայտնեց, որ ստուգումների հաճախականությունը սահմանված է օրենով:

Նախագահն առաջարկեց վերանայել օրենքի պահանջը:

Ա. Ասոյանը հայտնեց, որ կարող են վերանայել, այն կախված է տնտեսավարողի ռիսկայնության աստիճանից, բայց այս փուլում քայլ է կատարվում կիրարկումը բարելավելու ուղղությամբ, որովհետև իրականում առկա է այդ գործիքակազմը: Նույն ստուգաթերթը, որով տնտեսավարողը ստուգվում է, տեսչական մարմնի կայք-էջում բաց հրապարակված է, և ցանկացած տնտեսավարող կարող է վերցնել իր գործունեության վերաբերյալ ստուգաթերթը: Միաժամանակ, ի տարբերություն վերահսկողություն իրականացնող այլ պետական մարմինների, տեսչական մարմինների մեթոդաբանությունները կազմված են այնպես, որ յուրաքանչյուր տնտեսավարող հնարավորություն ունի ինքնուրույն գնահատել իր գործունեության ռիսկայնության աստիճանը ու հասկանալ, թե բարելավումների ինչ տեղեր կան, սակայն անհրաժեշտություն կա բարձրացնել տնտեսավաածության մակարդակը, որպեսզի տնտեսավարողն կիրառի օրենքով նախատեսված այդ բոլոր գործիքները:

Հաշվետվության հետ կապված Նախագահը ներկայացրեց մի քանի հարցեր: Մասնավորապես՝ տնօրինության աշխատակավարձի փոփոխության վերաբերյալ, եթե միջինով աշխատողների աշխատավարձը 11 տոկոսով բարձրացել է, ինչու տնօրինության աշխատավարձը չի փոփոխվել: Ինչու է կասեցվել պեստիցիդների ստուգման ծրագիրը: Նշեց, որ առկա են սպանդանոցները ծավալային առումով չեն բավարարում, ինչպես նաև վերահսկողության մեխանիզմները:

Գ. Ավետիսյանը հայտնեց, որ համաձայն հաշվետվության խոսքը վերաբերում է «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և տնօրինության աշխատավարձը բարձրացել է, բայց ավելի քիչ տոկոսով: Պեստիցիդների ծրագրի կասեցումը պայմանավորված է պատերազմի հանգամանքով և այս տարի շարունակվելու է: Սպանդանոցների մասով ներկայացրեց հանրապետության տարածքով բաշխվածությունը, վերահսկողության կարգը:

Ա.Ասոյանը ևս նկարագրեց սպանդանոցների կողմից տրամադրվող ձև 5 անասնաբուժական վկայականի տրամադրման կարգը և դրա միջոցով իրականացվող վերահսկողական մեխանիզմները, ինչպես նաև նշեց, որ այս պահին շրջանառության փուլում է գտնվում համապատասխան որոշման նախագիծ, որի ընդունման պարագայում զգալի կուժեղացվի վերահսկողության մակարդակը:

Նախագահը նշեց, որ կենդանիների համարակալման գործընթացը ևս կնպաստի խնդրի կարգավորմանը:

Տ. Գաբրիելյանը մտահոգություն հայտնեց, որ կենդանիների համարակալումը արդյունք չի ունենա, եթե սպանդանոցները չաշխատեն:

Ա. Ասոյանը շեշտեց, որ այդ գործընթացները փոխկապակցված են և պետք է իրականացվեն զուգահեռ:

Նախարարը նշեց, որ երեք կարևոր հանգամանք է առակ սպանդանոց, հարկեր և վերահսկողություն:

Ա. Պողոսյանը խնդրեց, որ Խորհուրդն ընդունի ի գիտություն, որ ֆինանսների նախարարությունը համաձայն չի, որ հարկման տարբեր համակարգերի առկայությունն է, որ խոչընդոտ է դառնում գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնության մակարդակի բարձրացմանը կամ առաջ մղմանը, դա ոչ միայն մսամթերքի, այլև բուսաբուծության ոլորտին է վերաբերում: Առաջարկեց հարցը քննարկել այս նիստում կամ այլ քննարկում կազմակերպել:

Նախարարը նշեց, որ տեղյակ է այդ հարցի վերաբերյալ ֆինասների նախարարության դիրքորոշմանը:

Նախարարը հետաքրքրվեց Իրանի Իսլամական Հանրապետության միջոցով կենդանի կենդանիների այլ երկրներ արտահանման արդյունքներով:

Գ.Ավետիսյանը հայտնեց, որ ստացել ենք մանր եղջերավոր կենդանի կենդանեիների Իրանի Իսլամական Հանրապետության տարածքով արտահանման թույլտվություն: Խոշոր եղջերավոր կենդանի կենդանիների մասով թույլտվությունը ստացվել էր ավելի վաղ:

Նախարարը հետաքրքրվեց նաև, թե ինչ միջոցներ է ձեռնարկվում մատուցվող էլեկտրոնային ծառայության ավելացման և ֆիզիկական ծառայության պակասեցման ուղությամբ:

Գ.Ավետիսյանը հայտնեց, որ խնդիրը կրում է ֆինանսական բնույթ:

Նախարարն արձանագրեց հարցի կարևորությունը և հայտնեց, որ ֆինանսների նախարարության հետ համատեղ կքննարկեն և միջոցներ կձեռնարկեն լուծման ուղղությամբ:

Ա.Առաքելյանը բարձրացրեց «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից լաբորատոր փորձաքննությունների իրականացման համար գնումների կազմակերպման գործընթացում առկա խնդիրներ՝ գնումների օրենսդրության տեսանկյունից:

Ա.Պողոսյանն առաջարկեց խնդիրը քննարկել այլ հանդիպման շրջանակներում:

Նախագահը նշեց, որ անցնում են օրակարգի 2-րդ և 3-րդ հարցերի քննարկմանը և նկատի ունենալով այն հանգամանքը, որ խորհրդի բոլոր անդամները ստացել են նյութերը՝ առաջարկեց սկսել հարցերից:

2 Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2020 թվականի տարեկան հաշվետվությանը հավանություն տալու մասին

(Ա.Հակոբյան)

3. Տեսչական մարմնի 2020 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակների գործունեության կատարողականի գնահատումը հաստատելու մասին:

(Ա.Հակոբյան)

Ա. Պողոսյանը 3-րդ հարցի վերաբերյալ հայտնեց, որ կատարողականի գնահատման մեջ Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը 3-րդ եռամսյակում գնահատված է 0,08, իսկ 4-րդ եռամսյակում՝ 0,08: Խնդրեց հստակեցնել գնահատման մեթոդաբանություն:

Ա. Հակոբյանը հայտնեց, որ Տեսչական մարմնի հիմնական նպատակին հասնելու մակարդակի գնահատումը կատարվում է հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարի և վերահսկողության ընթացքում նախատեսված ստուգաթերթերի ընդհանուր կշռի հանրագումարի հարաբերությամբ: Ստուգում իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների կողմից նախապես տրամադրվել են խախտումների և ստուգաթերթերի կշիռները:

Նախագահն առաջարկեց ըստ հերթականության հարցերը դնել քվեարկության:

1. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի տարեկան հաշվետվության նախագծին հավանություն տալու մասին:

Խորհրդի անդամների 7 կողմ ձայներով որոշվեց՝ հավանություն տալ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի տարեկան հաշվետվության նախագծին:

2 Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2020 թվականի տարեկան հաշվետվությանը նախագծին հավանություն տալու մասին

Խորհրդի անդամների 7 կողմ ձայներով որոշվեց՝ հավանություն տալ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման 2020 թվականի տարեկան հաշվետվության նախագծին:

3. Տեսչական մարմնի 2020 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակների գործունեության կատարողականի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Խորհրդի անդամների 7 կողմ ձայներով որոշվեց՝ հաստատել Տեսչական մարմնի 2020 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակների գործունեության կատարողականի գնահատման արդյունքները:

Նիստի ավարտից հետո Նախագահի առաջարկով որոշվեց Խորհրդի հաջորդ հերթական նիստը նշանակել 2021 թվականի ապրիլի 1-ին, ժամը 14.00-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ,

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. ՔԵՐՈԲՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ԲԱՍԵՆՑՅԱՆ